

# Ինչու՞ գնել հայկականը

Հայաստանյան արտադրողները կարծում են, որ «գնիր հայկականը» կոչը ժամանակին է և իրենց շահերից բխող, բայց և մտահոգվում են, որ միայն սպառողին ուղղված ջանքերը բավարար չեն հայաստանյան արտադրանքը մրցունակ դարձնելու համար: Այսպես կարելի է ամփոփել «Գնիր հայկականը» արշավի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում հայաստանյան մի խումբ ձեռներեցների և ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի միջև կայացած քննարկման արդյունքները, որը կայացավ ս.թ. հոկտեմբերի 20-ին:

«Գնիր հայկականը» արշավը ՀԱՀ-Հայաստան ծրագրի Ջրից դեպի Շուկա /ՋՈՇ/ բաղադրիչի նախաձեռնությունն է, որը հովանավորվում է ՀՀ կառավարության կողմից, սակայն միայն հայաստանյան ձեռներեցների անմիջական մասնակցությունը և աջակցությունը կարող է ապահովել արշավի իրական հաջողությունը: Եռակողմ արդյունավետ համագործակցությունը այս նախաձեռնության հաջող մեկնարկի և իրականացման գրավականն է, բայց որպեսզի այն իսկապես դառնա հայրենական արտադրության խթանման գործում և կենսունակ գործիք, արտադրողները պետք է միավորվեն դրա շուրջ, շարունակեն և զարգացնեն այն: Հենց այս հարցադրումով էլ սկսվեց կլոր սեղանի շուրջ քննարկումը, որը շատ արագ վերածվեց տեղական արտադրության խնդիրների և խոչընդոտների մասին բաց և անկաշկանդ երկխոսության նախարարի և ձեռներեցների միջև:

Հանդիպման մասնակիցները հիմնականում ներկայացնում էին սննդամթերքի արտադրության/վերամշակման և իրացման կառույցներ, որոնք բոլորն էլ դրական գնահատեցին «Գնիր հայկականը» նախաձեռնությունը, բայց և չվարանեցին նախարարի հետ կիսել իրենց այն կարծիքը, որ պետությունը բազմաթիվ այլ ձևերով ևս պետք է խթանի տեղական արտադրությանը: Բարձրացված հարցերի շարքում էին Ավելացված արժեքի հարկի բարձր դրույքաչափը, ներկրողներին տրվող արտոնությունները տեղական արտադրողների նկատմամբ և մրցակցային իրավիճակի խաթարումը ներքին շուկայում, տեղական արտադրանք արտահանելու հետ կապված դժվարությունները, ինչպես նաև բազմաթիվ այլ հարցեր: Նախարարն էլ իր հերթին կոչ արեց ձեռներեցներին բոլոր հարցերում չապավինել պետության աջակցությանը, այլ փորձել իրենց բիզնեսը հիմնելուց ու կայացնելուց առաջ ունենալ երկարաժամկետ տեսլական, մտածել արտադրանքի որակն ու արտաքին տեսքը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու մասին, ինչպես նաև հասնել ներդրման այնպիսի ծավալների, որոնք կարող են ապահովել միջին չափի բիզնեսի հաջողությունը: Չնայած բարձրացված հարցերի սրությանը, քննարկումը դրական ու կոնստրուկտիվ էր, իսկ երկկողմ տեղեկատվության փոխանակումը հնարավոր դարձրեց որոշ կոնկրետ քայլերի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել: Այսպես օրինակ, նախարարը խոստացավ ձեռներեցներին հնարավորինս աջակցել հայաստանյան արտադրանքը միջազգային ցուցահանդեսներում ՀՀ կառավարության հովանու ներքո ներկայացնելու հարցում, իսկ ներկաներին էլ շատ հետաքրքրեց օդանավակայանին կից «Լոգիստիկայի կենտրոն»

ստեղծելու մասին նախարարի ներկայացրած նախաձեռնությունը, ըստ որի նպաստավոր պայմաններ կստեղծվեն տեղական արտադրողների համար իրենց արտադրանքներն արտաքին շուկա արտահանելու առումով:

ՀԱՀ-Հայաստանի համար էլ առանձնապես կարևոր էր քննարկման այն մասը, որը վերաբերվում էր գյուղմթերքի մթերման և համախմբման կենտրոնների, սառնարանային տնտեսությունների անհրաժեշտությամբ: Գյուղացուն և վերամշակողին կապելու, նրանց միջև արդյունավետ տնտեսական հարաբերություններ ստեղծելու այսպիսի մոտեցումները հանդիսանում են ՋԴԾ-ի հիմնական նպատակներից մեկը և այս հարցում ՀԱՀ-Հայաստանն առաջիկա մեկ տարում կարող է իր զգալի ներդրումն ունենալ:

Ինչ վերաբերում է «Գնիր հայկականին», ապա ձեռներեցները պատրաստակամություն հայտնեցին աջակցել այս նախաձեռնությանը տրամադրելով ֆինանսական կամ այլ ռեսուրսներ: Հնչեցին արշավի գործընթացի բարելավմանն ուղղված բազմաթիվ առաջարկներ՝ սկսած այսպես կոչված «ուղղակի մարքեթինգի» կիրառումից մինչև հեռուստատեսությամբ փորձագետների կողմից բացատրական աշխատանքներ իրականացնելուն կամ արշավի շրջանակներում մասնակից ընկերությունները գովազդելուն:

Այսպիսով «Գնիր հայկականը» արշավի մեկնարկը կտրվի 2009 թ. նոյեմբերի 1-ին: Առաջիկա մի քանի ամսվա ընթացքում այն կընթանա ՀՀ կառավարության, ՀԱՀ-Հայաստան ծրագրի և մասնակից ձեռնարկությունների հովանավորչությամբ: Կողմերից յուրաքանչյուրն այս նախաձեռնության մեջ իր նպատակն ունի: Եթե ՀԱՀ-Հայաստանի համար առաջնայինը գյուղացու արտադրանքի սպառումն է, գյուղացուն վերամշակողի հետ կապելը ու նրա եկամուտը բարձրացնելը, ապա հայաստանյան արտադրողների համար կարևոր է իրենց արտադրանքի վարկանիշի բարձրացումը և վաճառքի ծավալների աճը: Հայաստանի կառավարությունը հավասարապես հետաքրքրված է այս երկուսով էլ, բայց և կարևորում է, որ արտադրողը սկսի մտածել ապրանքի որակի և արտաքին տեսքի բարելավման մասին, ներկրված ապրանքների նկատմամբ մրցունակության բարձրացման և արտահանման հնարավորությունների մասին՝ այսպիսով երկրի տնտեսությունը դարձնելով առավել մրցունակ: Իսկ իրականում «Գնիր հայկականին» նպատակը մեկն է՝ ունենալ հայրենական այնպիսի արտադրանք, որը մրցունակ կլինի թե ներքին և թե արտաքին շուկայում և որով կհպարտանանք բոլորս:

Արշավի ընթացքը ցույց կտա, թե արդյոք այն հասավ իր նպատակին, իսկ այն հաջողված կհամարվի, եթե արդյունքները լինեն այնքան շոշափելի, որ ապագայում նման նախաձեռնություններով հանդես գան հենց իրենք ձեռներեցները, և ինչու չէ՝ այն ֆերմերները, որոնք անձամբ կզգան, թե տեղական արտադրության խթանումը ինչ ուղղակի ազդեցություն է ունենում գյուղատնտեսական արտադրանքի ծավալների և սպառման վրա: